վրայ եւ, խոր, անդնդային, շատ հեռուից եկող մի ձայնով՝ արտասանեց.

— Մեռել ա...

Ոչինչ չպատասխանեցի:

Ոչինչ չկարողացայ պատասխանել: Կան վայրկեաններ, երբ մարդ բնազդաբար կանգ է առնում անորոշի տատանուող մի վարագոյրի առջեւ: Եւ՝ մութ մի բեմ է, ուր անսպասելի գործողութեան հերոսները յանկարծ գլուխ են բարձրացնում եւ սկսում են շարժուել: Ու չպատասխանեցի նաեւ նրա համար, որովհետեւ մահը՝ ամէն մարդու մահը՝ անակընկալ կեանքի նոր պատրանքներ է ստեղծում, վերջին վայրկեանին ցցում է ամբողջ իր ուժով, համադրական մեծ ժեստ է անում, լուսաւորում է, դիւցազներգական հերոսի նման ահաւոր թուր է բարձրացնում եւ, ընդմիշտ անհետանալուց առաջ, հարուածում է:

— Մեռել ա,— կրկնեց անծանօթը,— հասկանո՞ւմ էք, Լենինը մեռել ա...

— Ծխո՞ւմ էք,— ու առջեւը գլանիկների տուփը դրի:

Մարդը ծխեց եւ, երկար մտածելուց յետոյ, կարծես խոր մի երազից արթնանալով, արտասանեց.

— Իլիչը մեռել ա... Տաժանելի մի աստուած էր...

Ժպտացի:

— Ձեր ժպիտը անտեղի է: Եւ ինչո՞ւ Իլիչը չպիտի կարողանար լինել մի աստուած: Ոչ այն բացարձակ Ուժը, որին կարելի է դուք հաւատում էք, այլ այն յարաբերական խորհրդանշանները, որոնց նոր առաքեալները հերքում են յանուն Լենինի: Ցիչո՞ւմ էք Վօլդերի այն պատմուածքը...

— Ո՞րը:

— Մի օր խլուրդի եւ ծղրիտի բնակատեղիների վրայից արօրի խոփ անցաւ: Երբ ծղրիտը տեսաւ, որ մեծ որջը, ուր նա պատրաստուած էր, փայլուն երկաթի տակ տակնուվրայ է եղել, բացականչեց. «Այդ աւերը հրսկայ մի ծղրիտի գործն է»: «Ի՞նչ ես ասում,— պատասխանեց շլացած խլուրդը,— ծղրիտի գո՞րծ՝ երբե՛ք. դա հսկայ մի խլուրդի գործն է»:

— Ամէն մարդ ստեղծում է իր աստուածը՝ ըստ իր պատկերի: Վերյիշեցէք աստուածների թափորը՝ դարերի շարանի մէջ ընթացող: Ի՞նչ հոյակապ անցք՝ կայծակնահար ու դղրդալից հեռանկարի մէջ: Մտածեցէ՛ք մի վայրկեան փոթորկալից, պատռուած այն երկնքների մասին, ուր նրանք ապրած ու գործած են: Որոտընդոստ ձայները ամպերի մէջ, ահաւոր կուիները ալեկոծ ծովերի ափերին, չանթանման սուրերի բախումը, անսիրտ սպանութիւնները, ահաւոր ոճիրները... Ահաւասիկ, բոցավառ Սինայի գլխին, մօրուքաւոր աստուծոյ աղաղակը եւ դինուորական փողերի անվերջանալի ձայնը: Ահաւասիկ, յունաց աշխարհի Զեւսը, որի վառվռուն նայուածքին առջեւ Ողիմպոսը դողում է: Ահաւասիկ՝ հազար ուրիշներ... ոմանք բարի եւ երազկուն, որոնց մատերի տակ բնութիւնը քաղցր քնարերգում է, ոմանք խորասուզուած խորհրդաւոր մտքերի մէջ, եւ ոմանք էլ ողբերգութեան դիմակի տակ թաքնուած...

— Աստուածնե՛ր, աստուածնե՛ր... Պատմութեան ամէն մի անկիւնից մի աստուած է դուրս գալիս: Գալիս է, կանգ է առնում մարդկանց էութեան մէջ եւ գոյացման իր ձեւն է որոնում: Ցաճախ նա ներկայանում է մարդկային կերպարանքով, երբեմն ահաւոր կենդանիի պատկերի է վերածւում, իսկ երբեմն էլ դառնում է վերացական, անմարմին մի գաղափար՝ փիլիսոփաների թաքնաթաքուր խոհերի կենտրոնում ծնուած: Ի՞նչ տարօրինակ յեղաշրջումներ... Անաքսիմէնի հետ նա օդ է, որ ամէն մի վայրկեան շնչում ենք, իսկ Անաքսիմանդրը ճիգ է անում ապացուցանելու, որ աստուածները մեռնում են եւ վերածընւում: Պարմենիդը նրանց վեր է ածում լուսաւոր շրջանի, որով անանում է աշխարհը, մինչ Էմպեդոկլը, փառաւոր այդ բանաստեղծը եւ իր ժամանակի ծայրայեղ յեղափոխականը, բնութեան չորս տարրերի մէջ աւառնող աստուածներ է նշմարում: Իսկ Քսենոֆանը, բարեկամ, Քսենոֆանը կարծում էր, հաւատում էր, որ նա կոլոր է, տեսնում է եւ լսում, բայց չէ շնչում: Մի աստուած, որ չի շնչում, երեւակայեցէք...

— Կայ նաեւ Փիթագորի գեղեցիկ պարագան՝ թիւերը: Թիւե՛րը աստղերի պարը, խոր-